փոքր ինչ ազատ ողորմութեամբք չնորհեցելովք ի բարերարաց առաջին Աբբային մերոյ հիմնադրին, որ եղև սկզբնաւորիչ և ծաւալիչ ուղղափառութեան ի մէջ ազգին մերոյ: Ասէ պապն. գիտեմ ես զայն ծերունի Աբբայն. էր նա այր բարի և երևելի: Կրկնեաց. նա դարձեալ. և մի՞թէ ստանա՞յք դուք ինչ: Ասեմ ես. մեք անհատ միանձունքս ոչ եմք կարող ստանալ անձանց և ոչ զշիւղ մի. այլ ամենայն ինչ մատակարարի մեզ ի կրօնին: Ասէ սրբազան պապն. ուրեմն վարէք զկեանս կատարեալ հասարակութեան: Եւ ես ասեմ. այո՝ հայր սուրբ այդպէս է: Եւ յառաջ մատուցեալ եհարց դարձեալ պապն. է՞ քո աստ և այլ ընկեր: Եւ ես ասեմ այո՝ հայր սուրբ, և նա է գլխաւոր գործակալ գործոց կրօնիս մերոյ: Ասէ պապն. ո՞չ այն են գործք կացութեանց ձերոյ կրօնին: Ասեմ. այն իսկ են: Դարձեալ եհարց պապն. և զի՞նդ կան այլ միաբանք ձեր: Ասեմ ես. ամենեքին ողջ են. և փափագին համբուրել զսրբազան ոտս և ընդունիլ զօրհնութիւն սրբութեան ձերոյ: Յայնժամ սրբազան քահանայապետն համբարձեալ զաջ իւր, օրհնեաց և ասէ. օրհնեալ եղիցին ամենեքեան. և զու առաքեսջիր նոցա զօրհնութիւն իմ:...

Ի Հռոմ 1763 յունվարի 8

Նուաստ և անպիտան ծառայ
Եղ. Արսէն Ասլիկեան
կրօնաւոր Մխիթարեան

ՄԽԲ.

Հնախօսութեան պատկանող փոքրիկ նիւթ մը, որ կը հայի Վենետկոյ Տոժերու սեփական տարազին:

Վերապատուելի Տեառն Հ. Մկրտիչ վարդապետի ողջոյն սիրոյ ի տեր

.... Տօժն ընտրեցայ, և այն մեր փրօգուրաթոռ մօչինիկօն. եղբայր իւր և երկոքին որդիքն եղեն գաւալիէր: Կինն եղև և ընտրեցաւ դքսուհի առանց եղջեր, այսինքն թագի, բայց ըստ այլ զգեստեղինաց և հանգամանաց, և զմասնաւոր քող իմն արկանելոյ զգլխովն ի նշանակ դքսուհւոյ, ընկալաւ զիշխանութիւնն և զպատիւն. և չդնէն զեղջիւրն ի գլուխ, վասն այսորիկ է զի մի՛ ի հանդէսս թագաւորականս, յորս տօժն սէնաթիւ ելանէ, հարկ լիցի և կնոջն ընդ նոսա հանդիսակցիլ: Ունի զքառեակ թիւ օրիորդաց ընկերակցեալ միշտ ընդ իւր, որպէս այլք թագուհիք, զտարբերութիւն զօնտօլայի և եէտէկաց ի գնալն ուրեք. և ինքեան զմասնաւոր զօռթէ: Մինչև ցայժմ մի կամ երկու եղեալ են այսպիսի դքսուհիք աստ. այս եղև երկրորդն կամ երրորդն:...

1763 յապրիլ 23
[Ս. Ղազար]

[Ստեփանոս վ. Մելգոնեան Աբբահայր]

ՄԽԳ.

Կարևորագոյն տեղեկութիւն մ՝է Եր. Տէր Կոմիտասի Յովհաննէս զաւկին նկատմամբ, ինչ որ անծանօթ կ՝երևի իւր կենսագրին Յակոբ Վ. Մաղարեանի, երբ վկային զաւակները թուած առեն՝ կը գրէ լոկ. «Երկրորդին անունն էր Յովհաննէս, որ ապա բարգմանի պաշտօն ունեցաւ ի Ղեւոյիս» («ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԿՈՄԻՏԱՍԱՑ ՔԱՀԱՆԱՅԻ ԲԷՕՄԻԻՐՃԵԱՆՑ». Պոլիս 1912, էջ 87): Զի յիշատակուիր նաև Տ. Կոմիտասայ Երանացուցման առթիւ Գեր. Տ. Փրանկիսկոս Աղաճանեանէ նոր հրատարակուած իտալերէն վարքին մէջ (Տպ. Հռոմ, 1929): Այս նիւթով ուրիշ զբաղողներ ևս չունին ակնարկուած ծանօթութիւնը: